



ԿԱՍ ՊԱՖ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԿԱՍ ՊԱՖ-ը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 30.04.2013թ.-ին

Հիմնական Նպատակը

Կապիտալի ընթացիկ եկամտի և կայուն աճի ապահովումն է:

Ֆոնդի Տեսակ

Ֆոնդը բաց, պայմանագրային, ստանդարտ ֆոնդ է:

Ֆոնդի պահառուն և մասնակիցների ռեեստրավարը

Ֆոնդի պահառուն է հանդիսանում «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ (ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 46: www.vtb.am)

Ֆոնդի ռեեստրի վարումը իրականացնում է կառավարիչ ընկերությունը՝ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ:

Ներդրումային Քաղաքականություն

Ֆոնդի ակտիվները ներդրվում են ՀՀ պետական պարտատոմսերի կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված կամ ամբողջովին երաշխավորված պարտատոմսերի առնվազն 5 տարբեր թողարկումներում (ամեն թողարկումը ոչ ավել քան ակտիվների ընդհանուր արժեքի 20%-ը) և բանկային ընթացիկ հաշիվներում: Բացի այդ, ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել վերոհիշյալ պարտատոմսերի հետ կապված ածանցյալ գործիքներում միայն հեջավորման նպատակով:

Ռիսկեր

ԿԱՍ ՊԱՖ-ը ունի շուկայական ռիսկ որը պայմանավորված է տոկոսադրույքերի տատանումներով (պարտատոմսի տոկոսադրույքի բարձրացման դեպքում, տվյալ պարտատոմսի շուկայական գինը ընկնում է): Պարտատոմսերը նաև կրում են թողարկողի անվճարունակության և ինֆլացիայի ռիսկերը որոնք նույնպես պետք է հաշվի առնվեն: Ի հավելումն շուկայական ռիսկի, արժեթղթերով ներդրումները կրում են գործառնական, իրավական, քաղաքական և իրացվելիության ռիսկեր: Այդ պատճառով, կառավարիչն ունի ռիսկերի կառավարման մշակված համակարգ, որի օգնությամբ փոքրացվում են վերոհիշյալ ռիսկերի ազդեցությունը: Օրինակ՝ ֆոնդի ակտիվները ներդրվում են տարբեր թողարկումներում որպեսզի մեղմացվի տոկոսադրույքի ռիսկը: Ֆոնդի հաշվին նաև կարող են գնվել ածանցյալ գործիքներ (միայն հեջավորման նպատակով), որպեսզի մեղմացվի տոկոսադրույքի ռիսկը:

Կառավարչի մասնակցության չափը ֆոնդում

1.557 % (30.09.2014թ. դրությամբ)

ԿԱՄ ՊԱՖ ներդրումային ֆոնդի պորտֆելի կառուցվածքը

Պորտֆելի կառուցվածքը ըստ աշխարհագրական և ոլորտային բաշխվածության*				
	ՀՀ	ԵՄ	ՌԴ	Ընդամենը
Պետական հատված	99.837 %	0 %	0 %	99.837 %
Ֆինանսական հատված	0.163 %	0 %	0 %	0.163 %
Ընդամենը	100 %	0 %	0 %	

* 30.09.2014թ. դրությամբ

Սակագները

ԿԱՄ ՊԱՖ				
Դաս	Թողարկման վճար	Մարման վճար	Կառավարչի պարգևավճար	
A	4 %	0 %	0.4 %	
B	0 %	փայի ձեռքբերման օրվանը հաջորդող 12 ամսվա համար՝ 3% փայի ձեռքբերման օրվանը հաջորդող 13-րդ ամսից մինչև 60-րդ ամիսը ներառյալ՝ 1.65% փայի ձեռքբերման օրվանը հաջորդող 60-րդ ամսից հետո՝ 1%		1 %
C	0%	0 %	1.85 %	

Բոլոր Դասերի Համար Ընդհանուր ծախսեր	
Պահառուի պարգևավճար	0.15 %
Շահութահարկի ծախս	0.01 %
Միջնորդավճարների հետ կապված ծախսեր	Կախված դրանց ծավալից և բնույթից